

Ա. Գ. Մարտիսյան

ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՄԵԾ ՌԵՎՈԼՈՒՑԻԱՆ ԵՎ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՐՑԻ ԼՈՒԾՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Մարքսիզմի կլասիկները դեռևս իրենց վաղ աշխատություններում խոսել են սոցիալիստական ռեոլուցիայի խնդիրների մասին և, անդրադառնալով ռեոլուցիայի մեջ բանվոր դասակարգի ու գյուղացիության դաշինքին, կալվածատիրական-կուլակային շահագործումից գյուղացիությունն ընդմիշտ ազատելու խնդրին, գրել են կալվածատիրական և մյուս բոլոր տեսակի հողային խոշոր սեփականությունների էքսպրոպրիացիայի հարցը:

Հասարակության տնտեսական զարգացումը, արդյունաբերության, քաղաքների և, վերջապես, բնակչության աճը պահանջում է գյուղատնտեսության արտադրողական ուժերի, աշխատանքի արտադրողականության և ընդհանուր արտադրանքի արագ զարգացում: Սակայն կապիտալիստական հասարակակարգում կալվածատիրական խոշոր հողասեփականությունը, ճորտային տնտեսության հարաբերությունների ուժեղ մնացորդները, մյուս կողմից՝ մանրատված գյուղացիական տնտեսությունների սխտեմը բացառում են այդ, ետ պահում գյուղի զարգացումը, ստեղծում անհամամասնություն քաղաքի ու գյուղի զարգացման միջև:

Հասարակության զարգացման կապիտալիստական օրենքի անհամաչափության հետևանքով գյուղը աստիճանաբար ետ է մնում արդյունաբերական վայրերի զարգացումից, այնտեղ տիրում է հետամնացությունն ու տգիտությունը:

Եթե կապիտալիզմն իր զարգացման որոշ աստիճանում արգելակում է երկրի արտադրողական ուժերի ընդհանուր զարգացումը, ապա նա գյուղատնտեսության բնագավառում հիմնականում ընդունելով հողի մասնավոր մանր-սեփականության սկզբունքը, բացառում ու արգելակում է ռացիոնալ գյուղատնտեսության կազմակերպումը և արտադրողական ուժերի զարգացումը:

Երա համար ամբողջ հասարակության շահերը պահանջում են հողի իրական, պրոլետարական նացիոնալիզացիա, առանց որի երբեք հնարավոր չէ աշխատավորության կյանքի պայմանների բարելավումը գյուղում, և ընդհանրապես հնարավոր չէ լիկվիդացնել դարերի ընթացքում կապիտալիստական պայմաններում ստեղծված հետամնացությունը:

Մինչև Հոկտեմբերյան Սոցիալիստական մեծ ռեոլուցիան մեր երկրում բավականին ուժեղ էին միջնադարյան, կալվածային հողատիրության և հողային հարաբերությունների մնացորդները, որոնք իրենց գոյությունը շարունակեցին պահպանել նաև փետրվարյան բուրժուա-դեմոկրատական ռեոլուցիայից հետո էլ: Միայն պրոլետարական ռեոլուցիան մինչև վերջը սրբից ու սաքրեց ճորտատիրական հարաբերությունների բոլոր մնացորդ-

ները, ընդմիջտ վերացրեց հողի մասնավոր սեփականութիւնը, նացիոնալիզացիայի և ապա պրոլետարական սոցիալիզացիայի ենթարկեց բոլոր հողային սեփականութիւնները և ճանապարհ հարթեց գյուղատնտեսութեան զարգացման ու աստիճանաբար սոցիալիստական կերպարանափոխման համար:

Լենինը նոր հասարակակարգի ստեղծման գործուձշատ բարձր էր գնահատում հողի նացիոնալիզացիայի խնդիրը գյուղատնտեսութեան արտադրողական ուժերի զարգացման և ընդհանրապես գյուղատնտեսութիւնը առաջ մղելու գործում. նա գտնում էր, որ հողի նացիոնալիզացիան «սրբումամաքում է հողատիրապետման միջնադարյան բոլոր հարաբերութիւնները, վերացնում է հողի վրա ստեղծված բոլոր արհեստական խոչընդոտները»¹

Սակայն, ինչպես Ռուսաստանում, այնպես էլ մեզ մոտ՝ Հայաստանում բուրժուազիան և նրա պարտիաները, վախենալով պրոլետարական ռեւոլուցիայի սպառնալիքից, փորձ չարին դեմ գնալ կալվածատիրութեանը բեզբրին, աղալարներին, մելիքներին և չհամարձակվեցին հողի նացիոնալիզացիայի մասին խոսել անգամ. և իրապես բուրժուազիան անկարող է այդ հարցի լուծմանը հասնել:

Հողային հարցի իրական լուծումը մեր երկրում վիճակվեց պրոլետարիատին, հենց այդ իմաստով էլ կալվածատիրութեան հետքերը ոչնչացնելու համար, պրոլետարական ռեւոլուցիան լուծեց հողի նացիոնալիզացիայի հարցը:

Մեծ Հոկտեմբերի առաջին դեկրետներից մեկը հողի մասին էր:

Սովետների Համառուսական երկրորդ համագումարում, 1917 թ. հոկտեմբերի 26-ին (հին տոմարով), հողի մասին ընդունված դեկրետի առաջին և երկրորդ կետերում ասված է.

«1. Հողի կալվածատիրական սեփականութիւնը վերացվում է անհապաղ, առանց որեէ վճարի:

2. Այսուհետեւ, մինչեւ Հիմնադիր ժողովը մարզային հողային կոմիտեներին և Գավառական գյուղացիական պատգամավորների տնօրինութեանն են անցնում կալվածատիրական հողերը, այլև հավասարապես ուղելի, վանքապատկան, եկեղեցական բոլոր հողերը, նրանց ամբողջ կենդանի ու անկենդան ինվենտարով, շինութիւններով և բոլոր պարագաներով»:

Այսպիսով պրոլետարիատը, աշխատավոր գյուղացիութեան հետ միասին, Ռուսաստանում պետական իշխանութիւնն իր ձեռքը վերցնելուց անմիջապէս հետո, բռնազրավեց կալվածատիրական, վանքապատկան, թագավորական ընտանիքին պատկանող հողային բոլոր սեփականութիւնները, նրանց կենդանի ու անկենդան ինվենտարը և այն հանձնեց աշխատավոր գյուղացիութեանը աշխատավորական հողօգտագործման ենթարկելու համար:

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Ռեւոլուցիան հողի նացիոնալիզացիայի պատմական ակտով արմատական փոփոխութիւն մտցրեց մեր

¹ Լենին, Երկեր, հատոր IX, էջ 657, ռուս. հրատ.

երկրի հողային հարաբերությունների մեջ և փոխեց դյուղի զարգացման ուղին:

Հողերի նացիոնալիզացիայի լենինյան դեկրետը մարդկային հասարակության պատմությանը հայտնի ամենահոշակալոր պատմական դոկումենտներից մեկն է, որը ունի խոշոր հասարակական, գիտական ու գործնական նշանակություն:

Պատմության մեջ առաջին անգամ, բոլշևիկների պարտիայի դեկավարության միայն, անցյալում ճնշված ու շահագործված աշխատավոր գյուղացիությանը հաջողվեց առանց որևէ բացառությունների, առանց որևէ հատուցման՝ հող ստանալ, ինքնուրույն տնտեսություն վարելու հնարավորություն ձեռք բերել:

Հողի մասին լենինյան դեկրետը մեր երկրում հողային նոր, հասարակական ավելի առաջավոր հարաբերություններ ստեղծելու առաջին վճռական քայլն էր:

Բայց ոչ մի դասակարգ, հաղթանակած և ոչ մի ռևոլյուցիա իր նվաճած դիրքերի վրա մնալ չի կարող, իր առաջ կանգնած խնդիրների լուծմանը չի հասնի, եթե նա պետական իշխանությունը, երկրի արտադրողական ուժերը, բնական հարստությունները գրավելուց հետո իր խնդիրը ավարտված համարի:

Հողի սոցիալիզացիայի մասին Համառուսական Կենտրոնական Գործադիր Կոմիտեի 1918 թվի փետրվարի 19-ին ընդունած դեկրետը, այդ առումով, մի նոր, ավելի առաջավոր ու ավելի ռևոլյուցիոն քայլ էր, գյուղացիական հարցի լուծման գործում քաղաքական ու պատմատնտեսական խոշոր նշանակություն ունեցող միջոցառում էր: Դա գյուղում ագրարային հարաբերությունների բնագավառում կատարված ռևոլյուցիայի ավելի ամրապնդումն ու խորացումն էր:

Հողային հարաբերությունների ու հողօգտագործման բնագավառում կատարած այդ խոշոր միջոցառումը՝ հողի սոցիալիզացիան, սոցիալիստական հողօգտագործման անցնելու անհրաժեշտ նախապայմաններ ստեղծեց:

Ցարական բռնակալության ժամանակ գոյություն ունեցած հողային հարաբերությունների ու հողօգտագործման կարգը Հայաստանում դաշնակների կառավարության օրով մնացին անձեռնմխելի:

Հողային հարցի իրական, գործնական լուծումը, ուսու պրոլետարիատի օրինակով, Հայաստանում հնարավոր եղավ միայն 1920 թվականի նոյեմբերի 29-ին, այն օրվանից, երբ Հայաստանում հաստատվեցին սովետական կարգեր:

Հազախում կազմակերպված Հայաստանի ռևոլյուցիոն Կոմիտեն (Ռեկոմը) իր 1920 թ. նոյեմբերի 29-ի դեկլարացիայում ագրարային-գյուղացիական հարցի մասին դրում էր հետևյալը.

«Հայաստանի գյուղացիությունն իր ձեռքը կառնի ամբողջ հողը, որ պատկանում էր մելիքներին, ինչպես և վանքական, եկեղեցապատկան ու մզկիթների սեփականություն համարվող հողերը, ժողովրդի ձեռքը կանցնեն անտառների հարստությունը՝ ջրերը, լճերն ու հանքերը՝ Հայաստանի աշխատավոր ազգաբնակչության կարիքները բավարարելու համար: Նույն նպատակով Հայաստանի սոցիալիստա-

կան հանրապետության սեփականություն կհայտարարվեն ավելի կամ պակաս ծավալի դործարանները, որոնց ստեղծող բանվորները կտիրանան ազատ աշխատանքի»¹

Սովետական կարգի շրջանում հաստատվելուց անմիջապես հետո, 1920 թվականի դեկտեմբերի 21-ին, Ռեուլուցիոն Կոմիտեն (Ռեկոմը) մի ընդհանուր դեկրետ ընդունեց երկրում քաղաքական-տնտեսական նոր հարաբերությունների ստեղծման ու կարգավորման մասին, նա այդ ակտով հիմնովին ոչնչացրեց անցյալում գործած բուրժուա-կալվաճատիրական բոլոր օրենքները:

Ռեուլուցիոն Կոմիտեն հայտարարեց Ռուսաստանի Սովետական Սոցիալիստական Ֆեդերատիվ Ռեսպուբլիկայի որոշումներն ու դեկրետներն ընդունել որպես մեր գործունեության հիմք և իրավունք վերապահել Ռեկոմին, ելնելով երկրի ներքին աղգային ու անտեսական դարդացման առանձնահատկություններից, անել անհրաժեշտ լրացումներ ու վերապահումներ:

Ցարական բռնակալության «Հավաք օրինաց»-ի վերացման և ՌՍՖՍՌ-ի դեկրետները Հայաստանի Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկայի սահմաններում պարտադիր կիրառելու մասին ընդունված դեկրետում ասված է.

«1. Հայաստանի հանրապետության սահմաններում վերանում է «Ռուսական կայսրության հավաք օրինացը» այն բոլոր փոփոխություններով հանդերձ, որ մտցրել էին ժամանակավոր կառավարությունը, Անդրկովկասյան Սեյմը և Հայաստանի պառլամենտը ու կառավարությունը:

2. Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության սահմաններում գործող օրենքները համարվում են Ռուսաստանի Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետության օրենքները, այն փոփոխություններով ու լրացումներով, որ կմտցնի Հայաստանի Ռեկոմը և այլ իրավասու իշխանությունները»²

Հայաստանի աշխատավոր ժողովրդի, հատկապես դյուղացիության համար վճռական նշանակություն ունեցավ ագրարային-գյուղացիական հարցի բոլշևիկյան լուծումը, որը հնարավոր դարձավ բանվոր դասակարգի հաղթանակով միայն:

Հայաստանի Ռեուլուցիոն Կոմիտեի առաջին հողային օրենսդրական ակտը, որը ոչնչացնելով դաշնակների բուրժուա-կալվաճատիրական, ըստ էության ցարական կայսրության «օրենսգրքությունը», արմատական փոփոխության ենթարկեց երկրում տիրող ագրարային-գյուղացիական հարաբերությունները և պայմաններ ստեղծեց հողային նոր սոցիալիստական հարաբերությունների զարգացման համար. դա 1920 թվի դեկտեմբերի 28-ին Հայաստանի Ռեկոմի ընդունած դեկրետն էր «Հողերի աղգայնացման ու այն պետական հողային ֆոնդին հանձնելու մասին», որտեղ ասված է՝

«1. Բանվորա-գյուղացիական աղգարնակության հողադուրկ և սակավահող մասը հողաբաժիններով ապահովելու և դյուղատնտեսությամբ զբաղվել ցանկացողներին հողեր բաշխելու նպատակով, այլև հանրապետության

¹ «Ինկվարացիա» Հայաստանը սոցիալիստական խորհրդային հանրապետություն հաստատելու մասին», Ինկլետների և հրամանների ժողովածու, պրակ 1-ին, Երևան, 1920—1921 թ. թ., էջ 3:

² Նույն ակտում, էջ 28.

բոլոր կարիքները բավարարելու համար, արքունական, նաղելի, եկեղեցական, վանքապատկան, վակուֆային, մղկիթային, իրավաբանական անձերի և մասնատիրական հողերը առանց որևէ վճարի դառնում են Հայաստանի Սոցիալիստական Պորհրդային Հանրապետության սեփականություն:

2. Սույն դեկրետի առաջին հոդվածով հիշված հողերը հանձնվում են պետական հողային ֆոնդին, որը դանվելու է գյուղատնտեսական Կոմիսարիատի տրամադրության տակ:

3. Գյուղատնտեսական Կոմիսարիատի պարտականությունների մեջ են մտցվում պետական ֆոնդի բոլոր հողերի ճիշտ բաշխման աշխատանքները:¹

Սա Հայաստանի Սովետական իշխանության կողմից, Մեծ Ռուսիայի օրինակով, հողային հարցի լենինյան-ստալինյան լուծումն էր, հողի շուրջը ստեղծված բուրժուա-կալվաժատիրական հարաբերությունների ոչնչացումն էր ռևոլուցիոն ճանապարհով: Այսպիսով պրոլետարական դիկտատուրայի հաղթանակով ավարտվեց հողի համար Հայաստանի գյուղացիության դարեր շարունակ մղած պայքարը. պրոլետարական պետությունը հողերի պետականացմամբ ապահովեց գյուղացիության համար տնտեսական բարգավաճման լայն ուղի, ազատ բոլոր տեսակի տնտեսական ու հասարակական քայքայման վտանգից ու տարերքից: Կալվաժատիրական հողերի նացիոնալիզացիան Հայաստանի աշխատավոր գյուղացիությունը ազատեց բաղձապիսի հարկերից, տուրքերից և աշխատանքային պարտավորությունից, ոչնչացրեց հողային բացարձակ ռենտան, ամբողջովին փոխեց դիֆերենցիալ ռենտայի սոցիալական էությունը, այն դարձրեց գյուղատնտեսության սոցիալիստական ընդլայնված վերարտադրության աղբյուր: Գյուղացիությունը դադարեց վճարել մոտ 350.000 հեկտար կալվաժատիրական ու վանքապատկան հողերի համար կալվաժատերերին վճարվող հարկը, գյուղացին ազատվեց կալվաժատերերի համար աշխատանքային ամեն տեսակի պարտավորություններ կատարելուց, շեղյալ հայտարարվեցին վաշխառուական պարտքերը և, վերջապես, «Հողերի ազդայնացումը պրոլետարական պետությունը հնարավորություն տվեց հողագործության մեջ սոցիալիզմին անցնելու»² և սոցիալիստական գյուղատնտեսության անցնելու համար նախապայման ստեղծելով ապահովեց դասակարգային թշնամու, կարիքի ու հետամնացության դեմ վերջնական հաղթանակը:

Հողերի նացիոնալիզացիայի դեկրետի հրապարակումից հետո Հայաստանի Ռեկոմը հրապարակեց դեկրետներ ջրերի, հողի ընդերքի, անտառների պետականացման մասին:

Հայաստանի Ռևոլուցիոն Կոմիտեն 1921 թ. հունվարի 10-ին դեկրետ հրապարակեց բոլոր անտառների պետականացման մասին:

«Բոլոր անտառները, —ասված է դեկրետում,—մասնավոր մարդկանց պատկանող, գյուղացիների, եկեղեցական, վանքապատկան, վակուֆային, իրավասու անձանց, թե հասարակություն հայտնի կամ գաղտնի վարձակալության, հայտարարվում են Հայաստանի Սոցիալիստական Պորհրդային Հանրապետության սեփականություն»:³

¹ Հայ. Պետ. կենտ. Արխիվ. 34/200, գործ № 2, թերթ 1:

² Ленин, Соч., т. XXIII, стр. 203.

³ Դեկրետների ու հրամանների մողովածու, պրակ 1, էջ 61:

տեղ և սկսեց խոսել: Այդ իստոնակ խոսակցությունը մի վայրկյանս միտինգի վերածվեց: Նկատելի էր խիստ կարգապահություն: Պոստըզը գրվածաց բուշեից սպասվող բոլոր բարեփոխումները և այդ բոլորի մեջ նրանից սպասվող համաշխարհային խաղաղությունը: — Մենք կարող ենք խաղաղություն բերել բոլորին, ինչպես և հայ ժողովրդին: Այդ խոսքերի վրա՝ կեցցե Սովետական Իշխանությունը, կորչի դաշնակցությունը — աղաղակը թնգսցրեց օոո...»:

Այսպիսով, բանակի ղեկավարները պատրաստ էին կովել դաշնակցների դեմ հանուն սովետական կարգերի:

Ապստամբության կողմն էր նաև քաղաքի միլիցիայի կազմը, որը մայիսի 9-ին պատրաստակամություն հայտնեց իր ուժերը ամբողջովին դնելու Ռազմա-ռեզիստանտ կոմիտեի տրամադրության տակ:

Բանվորները սկսում են դիմել: Կազմակերպվում է բանվորական զվարգիս:

Իերված փաստերը ցույց են տալիս, որ կոմունիստների դրոշի տակ էր Ալեքսանդրոպոլի ուժը բանվորությունը, քաղաքի ամբողջ կայսրը՝ իր հրամանատար գեներալ Պաշտոնը: Կայսրի ամենազարդում էին հեծյալ զնդերը իրենց հրամանատարական կազմով, որոնց ներկայացուցիչները արդեն իրենց հավատարմությունն էին հայտնել առաջին իսկ պահանջի դեպքում կրծքով պաշտպանել Սովետական Իշխանությունը: Մայիսի 6-ից քաղաքի և նրա շրջակայքի հսկողությունը հեծնզորը իրենց շեքն էին վերցրել:

Քաղաքում տեղի ունեցած դեպքերը արձագանք են գտնում շրջապատի գյուղերում, ամենից առաջ Քավթառուի շրջանում, որտեղ աշխատավորները, հետևելով բանվորներին և զինվորներին, կոմունիստների ղեկավարությամբ, նախապատրաստվում էին դարպասող դեպքերը կազմ ու պատրաստ դիմադրելու համար:

Հաշվի առնելով այս բոլորը, Ալեքսանդրոպոլի կազմակերպության ղեկավարությունը և դրա հապատի ղեկավարությունը որոշում են զրավել իշխանությունը: Նրանք այն կարծիքին էին, որ իշխանության գրավման համար անհրաժեշտ նախապայմաններ արդեն կան, միայն բացակայում է Հայաստանի կոմունիստական պարտիայի կենտրոնի՝ Արմենկոմի սանկցիան: Մայիսի 3-ին, 5-ին և 6-ին Արմենկոմին ուղարկված նամակներով Ալեքսանդրոպոլի կազմակերպությունը պատրաստության սանկցիա է պահանջում:

Արմենկոմը սանկցիա չի տալիս: Իր այդ գիրքը նա պատճառաբանում է նրանով, որ Ալեքսանդրոպոլիները պատրաստ չեն իշխանությունը դրավելու և այն իրենց ձեռքում պահելու, ինչպես նաև նրանով, որ Հայաստանի մյուս շրջանների ելույթների հետ չհամաձայնեցված գործողությունների հետևանքով անխուսափելիորեն ուժերը կջլատվեն:

Առարկելով Ալեքսանդրոպոլի կազմակերպության կոմիտեի հավաստիացումներին, Արմենկոմը կրկրային կոմիտեին ուղարկած իր ղեկուցազրում ասում է.

«...Մենք հավատացած էինք, որ այդ բոլորը չափազանցված է...»

¹ «Հառաջ», 1920 թ. մայիս, № 108.

Դեռ ավելին, մենք հավատացած էինք, որ նրանց (ալեքսանդրոպոլիցիներին—Ղ.Կ.) հաջողությունը չի կարող կայուն լինել, որ անհրաժեշտ է ամենուրեք համաձայնեցնել մեր գործողությունները, քանի որ անջատ ելույթները փոշիացման և պարտության կհասցնեն, որ անհրաժեշտ է բոլոր շրջանների հետ կապ հաստատել և այլն¹։

Այնուհետև՝ հաշվի առնելով Ղաղախի (Իջևանի) Սովետական Ազրբեջանին սահմանամերձ լինելու հանգամանքը և Կարմիր Բանակի կողմից սպասվող օգնության անհրաժեշտությունը, Արմենկոմը որոշել էր, որ ապստամբություն սկսելու ազգանշան տվողը լինի Ղաղախը։

Կասկածից զուրս է, որ ապստամբության արագ և վերջնական հաղթանակը Հայաստանում, պահանջում էր, եթե ոչ ամբողջ, գոնե հիմնական շրջանների ապստամբական ուժերի գործողությունների միասնություն, որն ստեղծելու համար Արմենկոմը ժամանակին չցուցաբերեց պահանջվելիք օպերատիվություն և ձեռներեցություն։ Նա դանդաղեց ապստամբական գործողությունների ղեկավարման նախաձեռնությունը իր ձեռքը վերցնելու գործում։ Արմենկոմը մինչև մայիսի 6—7-ը փաստորեն վարանման մեջ էր և վճռական քայլեր չէր անում ապստամբության նախապատրաստումը գլխավորելու համար։

Ալեքսանդրոպոլի կազմակերպության պահանջով և նրա ձեռնման տակ, մայիսի 6-ին Արմենկոմը Ալեքսանդրոպոլ է ուղարկում իր ներկայացուցիչներին, լայն լիազորություններ տալով նրանց և պարտավորեցնելով, որ եթե չի կարելի կասեցնել ապստամբությունը, որ անհրաժեշտորեն պետք էր անել, ապա միաժամանակ կապվել Ղարաքիլիսայի շրջանների, Չեղոք գոտու և հարակից շրջանների հետ²։

Այս այս դիրեկտիվներով Արմենկոմի ներկայացուցիչները մասնակցում են Ալեքսանդրոպոլի կազմակերպության ակտիվի մայիսի 7-ի նիստին, որտեղ բազմակողմանիորեն քննության է առնվում ստեղծված գրությունը, իշխանության զրավման հետ կապված դժվարությունները և որոշում են սկսել ապստամբությունը։ Նիստին մասնակցում էին նաև Կարսից՝ Ղ. Ղուկասյանը, Սարիղամիշից՝ Ա. Ճուղուրյանը և ուրիշները, որոնք դիրեկտիվ են ստանում՝ ապստամբության համար անմիջական ձեռնարկումների գիմելու մասին։ Կազմվում է Հայաստանի ռազմա-ուսուցիչներ կոմիտե, նշվում է նաև Դիլիջանի և Կարսի ռազմա-ուսուցիչներ կոմիտեների կազմը։ Առանձնացվում է կառավարության կազմ, կատարվում են մի քանի աշխատողների նշանակումներ պատասխանատու պոստերում, մշակվում է գործողությունների պլան, ըստ որի պետք է ապստամբին նաև Կարսը, Սարիղամիշը, Լոռին և Ղաղախը, Թաղմա-ուսուցիչներ կոմիտեի հատուկ հրահանգից հետո։

Այսպես, Ալեքսանդրոպոլում կազմված Հայաստանի Թաղմա-ուսուցիչներ կոմիտեն մայիսյան ապստամբության նախաձեռնությունը և ղեկավարությունը իր ձեռքն է վերցնում։

Մինչև մայիսի 10-ը, ապստամբության օրը, Ալեքսանդրոպոլում փաստորեն ստեղծվել էր երկհիշխանություն։ Իշխանությունը դեռևս լրիվ չափով

¹ ՀԿ(Բ)Պ ԿԿ ԻՆ ԿԻԾ ՊԱ, ֆ. 30, գ. 7, էջ 50.

² Նույնը, էջ 52.

րեսի հրասարակուսով, այսինքն՝ գյուղերում եղած բոլոր հողերը, ում սեփականությունն էլ նրանք լինեին, միացվեցին մեկ ընդհանուր պետական ֆոնդում և նրանցից հավասարապես օգտվելու իրավունքը անխտիր տարածվեց բոլոր գյուղացիների վրա, առանց սեռի, ազգության, կրոնի ու հպատակության խտրության, և թե նա ցանկանում է իր սեփական աշխատանքի հիման վրա տնտեսություն ստեղծել:

Հողաշինարարության ու հողօգտագործման այս նոր պայմանների մեջ գյուղական բուրժուազիան՝ կուլակությունը տեսնում է իր հողային սեփականությունից ու շահագործման հնարավորությունից զրկվելու մտայն ապագան, դրա համար էլ հողաբաժանման հարցերի շուրջը կատաղի դասակարգային պայքար է սկսվում: Կուլակներն աշխատում են իրենց շուրջը հավաքել տնտեսապես ուժեղ միջակների այն փոքրաթիվ մասը, որը այդ միջոցառումների կիրառումով այս կամ այն չափով տուժում էր: Սովետական իշխանության հողաշինարարական այդ ձեռնարկումները գյուղական հիմնական մասսայի՝ չքավորների ու միջակների մեծամասնության կողմից չեղման ընդունելություն գտան, դա էլ ավելի ամրապնդեց կապն աշխատավոր գյուղացիության ու պետության միջև, պարտիայի մարտական ղեկավարությունը ապահովեց հաղթանակը դասակարգային թշնամու դեմ, հնարավոր դարձրեց ոչնչացնել կուլակային դիմադրությունն ու հետևողականորեն առաջ մղել հողի աշխատավորական օգտագործման քաղաքականությունը:

Հայաստանում սովետական կարգերի հաստատումով անցյալում Երեվանի նահանգի ավելի քան 328 կալվածատիրական ու վանքապատկան գյուղերի աշխատավոր գյուղացիներն ազատվեցին կալվածատիրական ճնշումից:

Լիովին վերացավ աշխատավոր գյուղացիության հողազրկությունը, որը մեղ մոտ կազմում էր ամբողջ գյուղական տնտեսությունների ավելի քան 15—20 տոկոսը:

Երկրի ամբողջ հողը անցավ գյուղացիների օգտագործմանը, հող ստացան բոլոր հողազուրկ և սակավահող գյուղացիները, վերջապես գյուղ վերադարձան ու հող ստացան նաև այն գյուղացիները, որոնք կապիտալիզմի օրով տնտեսապես քայքայվել, քաղաք էին գնացել: Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Ռեոլուցիայի հաղթանակի շնորհիվ, Հայաստանում սովետական կարգերի հաստատումով Հայաստանի աշխատավոր գյուղացիների համար ևս լուծվեց հողի հարցը, նրա դարավոր պայքարի հարցը:

Հայաստանում Սովետական իշխանության հաստատման շնորհիվ գյուղացիության օգտագործմանն անցավ ընդամենը 1.494.000 հեկտար հող: Այն դեպքում, երբ ցարական իշխանության օրով և դաշնակների տիրահոշակ կառավարման ժամանակ Հայաստանի մեկ գյուղացիական տնտեսությունը, միջին հաշվով, հասնում էր 1—1,5 հեկտար անորակ հող, այսօր կոլխոզի մեջ ընդգրկված մեկ ընտանիքին միջին հաշվով հասնում է 8,6 հեկտար հողամաս:

Պրոլետարական պետության կողմից հողի նացիոնալիզացիան ու գյուղացիությանը ցույց տրված նյութական-կազմակերպական օգնությունը օրեցօր ամրացրեց գյուղը, արմատապես փոխեց նրա սոցիալ-տնտեսական

դեմքը ու նախապատրաստեց այն սոցիալիստական շինարարութիւյան մեջ լիովին ներգրավելու համար:

Չնայած հողի նացիոնալիզացիան ստեղծեց առաջին անհրաժեշտ սոցիալական նախադրյալները դյուղատնտեսութիւնը սոցիալիստական հիմունքներով վերակառուցելու համար, սակայն պարտիան, նկատի ունենալով երկրի ընդհանուր տնտեսական քայքայվածութիւնը, հատկապես գյուղատնտեսութեան խիստ ընկած վիճակը, անհրաժեշտ համարեց առաջին հերթին վերականգնել այն, հանել այն իր քայքայման վիճակից, որին հասցրել էր իմպերիալիստական պատերազմը: Դրա հետ միասին անհրաժեշտ էր լիկվիդացնել նրա միջնադարյան հետամնացութիւնը, որը ստեղծվել էր բուրժուա-կալվածատիրական հողատիրութեան շնորհիվ: Այս բնագավառում գլխավոր խնդիրն էր բարձրացնել գյուղատնտեսութիւնը նյութատեխնիկական քիչ թե շատ առաջավոր մակարդակի և ապա աստիճանաբար այն ընդգրկել տնտեսութեան սոցիալիստական սխտեմի մեջ:

Գյուղատնտեսութեան վերականգնմանը զուգընթաց զարգացավ ու ծավալվեց գյուղատնտեսական կոոպերացիան, գյուղացիական տնտեսութիւնների ճնշող մեծամասնութիւնն ընդգրկվեց կոոպերացիայի ցանցի մեջ: Խոշոր սոցիալիստական տնտեսութիւնների փորձը դարձավ հանրամատչելի ամբողջ գյուղացիութեան համար:

Պարտիան՝ հիմնվելով երկրի սոցիալիստական ինդուստրացման հաջողութիւնների վրա, և առաջնորդվելով գյուղատնտեսութեան կոլեկտիվացման լենինյան-ստալինյան ուսմունքով, անցավ գյուղատնտեսութեան սոցիալիստական վերակառուցման բուն աշխատանքներին:

Սկսած 1929—1930 թվականներից, մեկ-երկու տարվա ընթացքում աշխատավոր գյուղացիութեան ճնշող մեծամասնութիւնն ընդգրկվեց կոլեկտիվ տնտեսութիւնների մեջ, և համատարած կոլեկտիվացման հիման վրա լիկվիդացվեց կուլակութիւնը որպես դասակարգ, որը մեր երկրում վերջին ու ամենաբազմամարդ կապիտալիստական դասակարգն էր:

Անցյալի 175 հազարից ավելի մանր ու տնտեսապես անզոր, թույլ գյուղացիական տնտեսութիւնների փոխարեն ռեսպուբլիկայում կազմակերպվեցին 1042-ից ավելի կոլտնտեսութիւններ:

Երկրի հողային և ջրային հարստութիւնները, պետական նյութատեխնիկական օգնութեան հետ միասին, դարձան կոլխոզային գյուղացիութեան նյութական ու աշխատանքային կյանքի պայմանների բարելավման աղբյուր:

Ռեսպուբլիկայում կազմակերպվեցին 38 ՄՏ-կայաններ: Ջրաշինարարական հսկայական աշխատանքներն ու պետական սխտեմատիկ վարկավորումը ներկոլտնտեսային կուտակումների հետ միասին, հսկայական տեմպերով առաջ մղեցին սոցիալիստական գյուղատնտեսութիւնը:

Ստալինյան երեք հնգամյակների ընթացքում արագ կերպով աճեցին սոցիալիստական գյուղատնտեսութեան ցանքային տարածութիւնները (հատկապես արժեքավոր ու շահարեւ կուլտուրաների), աճեցին արտադրութեան միջոցները, համախառն արտադրանքը, նրա ապրանքայնութիւնը, աճեցին կապիտալ ներդրումներն ու ներտնտեսային կուտակումները:

Հսկայական չափերով աճեցին կոլխոզների հասարակական արտադրամիջոցները: Եթե այդ ցույց տանք գումարային արտահայտումով,

ապա պատկերը հետեյալն է. 1932 թ. 46,0 միլ. ուրբուր գիմաց 1937 թ. ունենք 230,8 միլ. ուրբուր, 1940 թ.՝ 421,7 միլ. ուրբուր և 1945 թ.՝ 704,2 միլ. ուրբուր. ըստ որում նշանակալից է, որ հատկապես մեծ չափով աճել են արտադրութեան հիմնական միջոցները, 31,4 միլիոնից հասնելով 411 միլիոնի, այսինքն՝ աճել մոտավորապես 13 անգամ:

Մեծ չափերով աճեց կոլխոզների համախառն եկամուտը: Այսպես, օրինակ, եթե 1932 թվին Հայաստանի կոլխոզների համախառն եկամուտը կազմում էր 45,4 միլ. ուրբուր, ապա 1937 թվին՝ 181,1 միլ. ուրբուր, 1940 թ.՝ 295,3 միլ. ուրբուր, իսկ 1945 թվին ունենք 530,0 միլիոն ուրբուր: Այդ նշանակում է՝ համախառն արտադրանքը աճել է ավելի քան 12 անգամ:

Ըսկ եթե այդ ցույց տալու լինենք մեկ կոլխոզի, մեկ կոլխոզային ընտանիքի ու մեկ աշխատունակ կոլխոզնիկի նկատմամբ, կունենանք հետեյալ պատկերը.

| Տարի | Համախառն եկամուտ հառում է | | |
|------|---------------------------|--------------------------|----------------------------|
| | մեկ կոլխոզային | մեկ կոլխոզային ընտանիքին | մեկ աշխատունակ կոլխոզնիկին |
| 1932 | 50,9 | 719 | 297 |
| 1937 | 167,4 | 1086 | 493 |
| 1940 | 287,0 | 1617 | 831 |
| 1945 | 508,6 | 3060 | 1677 |

Այս բոլորին զուգահեռ աճել է կոլխոզային արտադրութեան ապրանքայնութիւնը. դաշտավարութեան ու անասնապահութեան արտադրանքի ապրանքայնութիւնը, տոկոսներով արտահայտած, կազմում է.

| | Դաշտավ. | Անասնապ. | Երկու ճյուղերին միասին վերցրած |
|---------|---------|----------|--------------------------------|
| 1937 թ. | 32,2 | 58,6 | 35,8 |
| 1940 թ. | 47,7 | 69,5 | 51,2 |
| 1945 թ. | 37,0 | 70,7 | 43,2 |

Կոլխոզների արտադրութեան լայնացումը՝ արտադրութեան միջոցների ավելացումը, համախառն արտադրանքի ու ապրանքային ելքի աճը, հնարավորութիւն ստեղծեցին տարեցտարի ավելացնելու ներկոլխոզային կուտակումները՝ կոլեկտիվ տնտեսութեան արտադրութիւնը շարունակաբար սոցիալիստական ընդլայնված վերարտադրութեան հիմունքներով առաջ տանելու համար:

Ներկոլխոզային կուտակումները 1932 թվին 34,1 միլ. ուրբուր գիմաց 1945 թվին հասել են 1.165,5 միլ. ուրբուր, կամ մեկ կոլտնտեսային ընտանիքի նույն 1932 թվին հասել է 54 ուրբուր, իսկ 1945 թվին ավելացել է մինչև 672 ուրբուր:

Այս թվերը ցույց են տալիս բոլշևիզմի ազրարային-գյուղացիական քաղաքականութեան ճշմարիտ ու առաջավոր լինելու գիտական ուժը, ցույց

են տալիս սոցիալիստական գյուղատնտեսության նվաճումները, նրա բոլոր առավելությունները մանր գյուղացիական տնտեսության նկատմամբ, որը կառչած իր մանր հողակտորին, իր աղքատիկ գոյությունն էր քարշ տալիս և աստիճանաբար հողմացրիվ դառնում կապիտալիստական հասարակության զարգացման անողոր օրենքների ազդեցության ներքո:

Բոլշևիկների պարտիայի ազրարային քաղաքականության հաղթանակը, սովետական կարգերի հաստատումը մեր երկրում փրկեց աշխատավոր գյուղացուն կարիքի ու շահագործման գառն վիճակից, բարձրացրեց ու փոխադրեց նրան տնտեսության զարգացման նոր, սոցիալիստական ուղու վրա, և մեկ ընդ միշտ փրկեց նրան հասարակական-տնտեսական քայքայման դժբախտ հեռանկարից, դարձնելով նրան սոցիալիստական հասարակակարգի ակտիվ կառուցող: